

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂՎԱԾ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ՝ ԻՐ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ԱՄՆ-Ի ԹԵՄԻ ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ՀԱՅԿ ԳԱՎՈՒՔՃՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍՐԱՀՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

(1969 թ. նոյեմբերի 30)

Գոհություն Ամենակալին Աստուծո, որ իր բարեխնամող աջով, հաստատ և կենդանի կպահպանե Հայաստանյայց առաքելական մեր սուրբ եկեղեցին, իր աղոթքի տաճարներով և իր հավատացյալ ժողովուրդով:

Այսօր, երբ դուք, ամերիկահայ զավակներ Մեր, ի մի հավաքված, ձեր հոգիներու հայացքը հառած եք դեպի Մայր Աթոռը Ամենայն Հայոց Հայրապետության, Մենք ձեզի կուգանք, բերելու Աստուծո օրհնությունը այս սուրբ տեղեն, ուր շատ դարեր առաջ Քրիստոսի լույս հոգին իջավ, և լեցուց Արարչագործ երկիրը Հայոց:

Հայերը Քրիստոսի լույսը իրենց սրտերուն մեջ առին: Հավատացին այդ լույսին, ապրեցան այդ լույսով: Այդ լույսով վերակառուցին իրենց ընկերային կյանքը, ստեղծեցին իրենց ազգային մշակույթը: Այդ լույսով կերտեցին իրենց հայկականությունը, այդ լույսով պաշտպանեցին իրենց հայրենիքը, վտանգի պահերուն:

Դուք ևս, ամերիկահայ զավակներ Մեր, այդ լույսին ժառանգորդներն եք:

Իբրև ամերիկյան մեծ ու պերճ երկրի հավատարիմ քաղաքացիներ, հպարտ եղեք ձեր քրիստոնեական հավատքով, հպարտ եղեք ձեր հայ անունով, ձեր ազգային պատմությամբ ու մշակույթով:

Մեր օրերու մարդիկ ու ժողովուրդներ, ծանր տագնապներու մեջ կապրին, կանգնած ըլլալով բարոյական փլուզումներու և ազգամիջյան անասելի բախումներու եզրին: Հակառակ գիտության նորանոր հրաշագործությունների, մարդկությունը ավելի քան երբեք անհանգիստ է, անապահով ու ծանր երկյուղներով լեցուն: Եվ աշխարհի մեջ խաղաղություն չկա: Ո՞րն է փրկության ճամփան: Հիսուս կըսե մեզի՝ աշխարհի մեջ խաղաղություն կըլլա, եթե մարդոց հոգիներուն մեջ խաղաղություն ըլլա:

Հիսուս կըսե մեզի՝ աշխարհի մեջ արդարություն կըլլա, եթե մարդիկ ու ազգություններ զիրար ճանչնան իբրև հարազատ որդիները միևնույն երկնային Հոր: Հիսուս կըսե մեզի՝ աշխարհի մեջ երջանկություն կըլլա, եթե մարդիկ սպրին ու աշխատին, իրենց նմաններուն բարօրության համար:

Մենք կհավատանք թե միայն այսպե՛ս է որ մարդկային աշխարհը պիտի կարողանա հասնիլ նավահանգիստը խաղաղության, արդարության ու երջանկության: Մարդու վերածնունդով, պիտի վերածնի նաև աշխարհը համայն:

Սիրելի հավատացյալ զավակներ Մեր, այն ինչ որ ճշմարիտ է աշխարհին համար, ճշմարիտ է նաև մեր ազգին համար: Թող մեր փոքր ածուի մեջ ևս աճի ու ծաղիկ բանա խաղաղարար ոգին, եղբայրասիրությունը, համեստաշխ ու շինարար գործակցությունը մեր սուրբ եկեղեցվո ծոցին մեջ, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի աստվածային օրհնության ներքև: Տիվ և գիշեր Մենք աղոթող ենք որ Պարգևատուն բարյաց, այս բոլոր բարիքները առատապես շնորհե մեր ժողովուրդի բոլոր զավակներուն անխտիր:

Մենք կճանչնանք ձեզ և քաջ ծանոթ ենք ձեր կյանքին և ձեր եկեղեցաշեն ու հոգեշեն գործունեության: Գիտենք, թե դուք հոգևոր սպասավորներ, և դուք բարեջան աշխարհական գործիչներ, ձեր կարելին կընեք: Գիտենք նաև թե ներքին դժվարություններ և երբեմն նույնիսկ անհասկացողություններ ունիք: Կհավատանք սակայն թե այդ դժվարություններն ու անհասկացողությունները մակերեսային են և անցողական:

Երբեմն մարդիկ հակված կըլլան երկրորդական հարցերը շփոթելու էական ու հիմնական հարցերուն հետ: Դուք այդ թյուր իմացության զոհ մի երթաք:

Երբեմն մարդիկ հակված կըլլան վիճելու և նույնիսկ զիրար վշտացնելու, հարցերու շուրջ, որոնք հեռու են իրավ ու կենսական հարցեր ըլլալե, որոնք կեղծ, շինծու հարցեր են, որ իզուր տեղ կչարչարեն մեր միտքերը:

Դուք ժամանակ մի կորսնցուցեք նման հարցերով: Պահեցեք ձեր մտածումի հստակությունը, իրականության զգացումը, և սրտի ջերմությունը ձեր լծակից եղբայրներուն հանդեպ, ձեր ազգակից եղբայրներուն հանդեպ: Կողք-կողքի մնացեք, միասին աշխատեցեք, զիրար գնահատելով, իրարու օգնելով, մեկդ մյուսին ներող և հարգող:

Ուր չկա իրավ եղբայրասիրություն, փոխադարձ գնահատանք և ներողամտություն, այնտեղ Քրիստոս ներկա չէ: Այնտեղ չկան ճշմարիտ քրիստոնյաներ:

Նորեն կուզենք հիշեցնել ձեզի առաքյալի հավետ ճշմարիտ խոսքը՝ եթե մեկը կըսե թե կսիրե զԱստված, բայց իր եղբայրը կատե, անիկա սուտ կխոսի:

Արդ, սիրելի հավատացյալ հայեր, եթե կուզեք իսկապես ձեր Հայրապետը ուրախացնել, ոչ թե միայն խոսքով այլ մանավանդ ձեր կյանքի գործերով և ձեր ամենօրյա կենցաղով, մնացեք հավատարիմ սուրբ Ավետարանի սիրո և խաղաղության պատվիրաններուն, մնացեք հավատարիմ մեր սուրբ եկեղե-

ցիի կարգ ու կանոնին, ու անոր ավանդներուն: Մնացեք հավատարիմ մեր լույս հավատքի հավիտենական աղբյուր սուրբ Էջմիածնին և անոր սուրբ հեղինակության:

Թեև մարմնապես ձեզմե շատ հեռու, սակայն այս պահուս Մենք կզգանք թե հոգիով ձեր մեջ կգտնվինք, ձեզի շատ մոտիկ: Կտեսնենք ձեր ցանկալի դեմքերը, ձեր ժպիտը, ձեր արցունքը աչքերուն: Կզգանք ձեր սրտերուն ջերմությունը: Մենք կսիրենք ձեզ բոլորդ, ձեզմով կապրինք, ձեզմով կմխիթարվինք, ձեզմով երջանիկ ենք: Կաղոթենք, որ բարին Աստված ձեզ պահեպահպանե՝ մարմնով և հոգվով քաջառողջ, արի, հեռու ամեն փորձություններե և չար պատահարներե, ձեր առաքինի գործերու հաջողությամբ:

Կեցցե Հայաստանյայց եկեղեցին և համայն ազգը մեր:

Կեցցե ամերիկահայ հավատավոր մեր հարազատ ժողովուրդը:

Կեցցե ձեր փառավոր երկիրը, մարդասերն Ամերիկան:

Աստվածակառույց սուրբ Էջմիածնեն ձեզի ամենուդ հայրական ողջույն և օրհնություն, բյուր օրհնություն, բյուր օրհնություն. ամեն:

15 սեպտեմբեր 1969 թ.